Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Սևքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (34 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը ,որին հավակնում է /Ձև 1/,
2. <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. Ինքնակենսագրություն /Ձև 5/
5. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,
6. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,
7. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի՝ քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացվածփաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 1-ից մինչև մարտի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունվումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 17-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Սևքար, փ.16, շենք 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 00-43-87: